

ՀՏԴ 809.198.1

Հայոց լեզու

ԳՐԱԲԱՐԻ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՄԱՆՈՒՆՆԵՐ Օֆնյա ԲԱԲԱՅԱՆ

Բանալի բառեր՝ համանունություն, լեզվաբանական միավոր, ձևաբանական, շարահյուսական, ներհարացուցային, միջհարացուցային, ձև, բովանդակություն, գրաբար, խոնարհում, հոլովում

Ключевые слова: омонимия, лингвистическая единица, морфологические, синтаксические, внутрепарадигматические, межепарадигматические, форма, содержание, грабар, спряжение, склонение.

Key words: homonymy, linguistic unit, morphological, syntactic, intraparadigmatic, interparadigmatic, form, content, Grabar, declension, conjugation.

О. Баваян

Некоторые морфологические омонимы древнеармянского языка

Омонимия является одним из факторов, выявляющих соотношения формы и содержания некоторых языковых единиц. Омонимы могут быть лексическими, грамматическими, морфологическими и синтаксическими. В статье представлены внутрепарадигматические (члены омонимических рядов принадлежат разным субпарадигмам) и межепарадигматические (члены омонимических рядов принадлежат разным парадигмам разных частей речи) омонимические ряды древнеармянского языка, особенно в системе глагола, а также спряжения и склонения.

O. Babayan

Some Morphological Homonyms of the Ancient Armenian Language

Homonymy is one of the factors identifying correlation of form and content of some linguistic units. Homonyms can be lexical, grammatical, morphological and syntactic. The article presents intraparadigmatic (members of homonymous lines belong to different subparadigmas) and interparadigmatic (members of homonymous lines belong to different paradigmas of various parts of speech) homonymous series of the ancient Armenian language, especially in the system of the verb, as well as conjugation and declension.

Համանունությունը լեզվի արտահայտության և բովանդակության կողմերի, այսինքն՝ լեզվական որոշ միավորների ձևախմբատային փոխհարաբերությունները բացահայտող նրկայաներից մեկն է: Համանունները կարող են լինել ինչպես բառային, այնպես էլ քերականական՝ ձևաբանական ու շարահյուսական: Հոլովածում ներկայացվում են գրաբարի ներհարացուցային (համանունական շարքերի անդամները պատկանում են միևնույն խոսքի մասի տարբեր ենթահարացույցներին) և միջհարացուցային (համանունական շարքերի անդամները մտնում են տարբեր հարացույցների, տարբեր խոսքի մասերի համակարգերի մեջ) համանունական շարքեր:

Համանունությունը լեզվի արտահայտության և բովանդակության կողմերի, այսինքն՝ լեզվական որոշ միավորների ձևախմբատային փոխհարաբերությունները բացահայտող նրկայաներից մեկն է: Համանունները (նույնանուն) բնութագրվում են որպես ձևով նույնական, իմաստով տարբեր լեզվական միավորներ, որոնք կարող են լինել ինչպես բառային, այնպես էլ քերականական՝ ձևաբանական ու շարահյուսական¹: Ժամանակակից հայերենի քերականական կառուցվածքի ուսումնասիրությանը նվիրված աշխատություններում քերականական համանունների վերաբերյալ որոշակի դիտողություններ են արել Էդ. Աղայանը, Գ. Զահուկյանը, Մ. Ասատրյանը, Ա. Աբրահամյանը, համապարփակ ուսումնասիրություն է կատարել Ն. Պառնայանը²: «Քերականական համանուններ ասելով հասկանում ենք այն քերականական ձևայաները, բառաձևերը և շարահյուսական կառույցները, որոնք, լինելով նույ-

¹ Տե՛ս Աղայան Է., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, Զահուկյան Գ., Աղայան Է., Առաքելյան Վ., Քոչյան Վ., Հայոց լեզու, առաջին մաս, Ա պրակ, Եր., 1980, Առաքելյան Վ., Խոսչատրյան Ա., Էլոյան Ս., Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, Եր., 1979, Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1982, Մարգարյան Ա., Հայոց լեզու, Եր., 1993, Մինասյան Ս., Արդի հայոց լեզու, Ստ., 1999:

² Տե՛ս Աղայան Է., Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Եր., 1967, Զահուկյան Գ., Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Եր., 1969, Զահուկյան Գ., Ժամանակակից հայերենի տնտության հիմունքները, Եր., 1974, Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, հ. Բ, Եր., 1973, Աբրահամյան Ա., Հայերենի քերականական համանունության շուրջը, Եր., ՊԲՀ, 1974, հ. 1, Պառնայան Ն., Քերականական համանունները ժամանակակից հայերենում, Եր., 1974:

նական արտահայտության պլանում, տարբերվում են բովանդակության պլանում, այսինքն՝ տարբեր են իրենց իմաստով և ունեն գործառնության ու գույքորոշիչության տարբեր ոլորտներ»¹:

Համանունությունն ընդունված է որոշել լեզվի համաժամանակյա կտրվածքում, լեզվի զարգացման որոշակի շրջանում: Սույն հոդվածում քննության ենթ ենթարկում գրաբարի ձևաբանական մի քանի համանուններ:

Ա.Աբրահամյանը «Հայերենի քերականական համանունության շուրջը» հոդվածում ընդգծում է, որ լեզվաբանության մեջ ժամանակակից ըմբռնմամբ քերականական համանություն է համարվում քերականական երկրորդական ձևային համանությունը, տարբերակում է ներհարացուցային և միջհարացուցային համանություն, խոսում նաև գրաբարի հոլովման համակարգում նկատվող համանության երևույթի մասին, որը մասնակի ընդգրկում ունի²:

Գրաբարի ձևաբանական համանությունը քննելիս նույնպես կարելի է տարբերակել ձևային համանություն և բառաձևերի ներհարացուցային (համանունական շարքերի անդամները գործառնում են միևնույն խոսքի մասի սահմաններում, սակայն պատկանում են նրա տարբեր ենթահարացուցաներին) և միջհարացուցային (համանունական շարքերի անդամները մտնում են տարբեր հարացուցաների, տարբեր խոսքի մասերի համակարգերի մեջ) համանություն:

1. Ապառնի դերբայ - անցյալ դերբայի հոգնակի թվի սեռական և տրական հոլովաձևեր

Գրաբարում ապառնի դերբայը երկու տարբերակ ունի, որոնցից մեկը ձևավորվում է *-ng* մասնիկը ավելացնելով անորոշ դերբայի վրա: *Ի* խոնարհման բայերի խոնարհիչը անորոշ դերբայում փոխվում է *ծ* խոնարհիչի, իսկ *ու* խոնարհման բայերի *ու* խոնարհիչը սղվում է (գրելոց, թշնելոց, խաղալոց, հեղոց):

Գրաբարի անցյալ դերբայի *-նալ* մասնիկը դրվում է գլխավորապես բայերի անցյալ կատարյալի հիմքի վրա: *Ե* և *ի* խոնարհումների պարզ բայերի մեծ մասի անցյալ դերբայը կարող է կազմվել նաև ներկայի հիմքից: Չեզոք և կրավորական սեռի բայերի անցյալ դերբայը գրաբարում հոլովվում է *ո* վերջադրական պարզ հոլովմամբ թե՛ եզակի, թե՛ հոգնակի թվով: Հոգնակի թվի սեռական և տրական հոլովներում *ո* հոլովիչն ու *ց* հոլովակերտը ձևավորում են *-ng* մասնիկը, որը համանություն է ստեղծում ապառնի դերբայի *-ng* ձևային հետ: Այսպես՝ *առաքել ծ* խոնարհման պարզ բայի ապառնի դերբայն է *առաքելոց* (= առաքելու), որը կազմում է սահմանական եղանակի բաղադրյալ ապառնի և բաղադրյալ անցյալի ապառնի ժամանակաձևերը, իսկ ներկայի հիմքից կազմվող *առաքենալ* անցյալ դերբայի հոգնակի թվի սեռական ու տրական հոլովաձևերը՝ *առաքելոց* (= առաքյալների՝ առաքվածների), որը ստացվել է *-նալ* ձևային *նա > ծ* հնչյունափոխության արդյունքում: *Առաքելոց* (անցյալ դերբայ, հոգնակի թիվ, սեռական հոլով) եկեղեցի = *Առաքյալների* եկեղեցի:

2. Գրաբարում բայերն ունեն չորս խոնարհիչ, հետևաբար և չորս խոնարհում: *Ա, Ե, Ի, ու* խոնարհիչները / ձայնորդի հետ կազմում են անորոշ դերբայի դերբայական մասնիկները: Անորոշ դերբայում ի խոնարհիչը փոխարինվում է ե խոնարհիչով, որի հետևանքով ի խոնարհման բայերը անորոշ դերբայում նույնպես ստանում են *-ծ* մասնիկը՝ ձևով նմանվելով *ծ* խոնարհման բայերին (արձակել և երկնել (իմ): Խոնարհված ձևերում այդ բայերը տարբերվում են:

3. Ներգործական և ընդհանուր կամ հասարակ սեռի բայերի անորոշ դերբայը ըստ անհրաժեշտության (գործածության) նույն ձևով կարող է արտահայտել ներգործական և կրավորական սեռի իմաստներ.

ընթերնում = ընթերցել (կարդալ) և ընթերցվել (կարդացվել)

իմանալ = իմանալ (հասկանալ) և իմացվել (հասկացվել)

դատել (դատիմ) = դատել և դատվել

4. Գրաբարում բոլոր բայերի ենթակայական դերբայը գործածական չէր: Ենթակայական դերբայ չունեին *ու* խոնարհման կրավորական սեռի, ինչպես նաև անցյալ կատարյալի հիմքում *ի* թույլ բաղադրիչով հիմք ունեցող բայերը: Այդ բայերի ենթակայական դերբայի իմաստը կարող էր արտա-

¹ Պառնասյան Ն., Քերականական համանունները ժամանակակից հայերենում, Եր., 1974, էջ 21:

² Տե՛ս Աբրահամյան Ա., Հայերենի քերականական համանունության շուրջը, Եր., ՊԸՀ, 1974, հ. 1, էջ 26-29:

հայտվել ինչպես տարբեր միջոցներով, այնպես էլ *h* մասնիկով ապառնի դերբայով (ներգործական նշանակությամբ)՝ *գործելի* = *գործելու* և *գործող*:

Հազվադեպ ենթակայական դերբայի իմաստ կարող է արտահայտել նաև անցյալ դերբայը.

Դուռն իմ բաց էր ամենայն *ենկնոց*՝ Իմ դուռը բաց էր բոլոր *ենկոների* համար:

5. Սահմանական եղանակի ներկա ժամանակաձևում ներգործաձև և կրավորաձև խոնարհումների համար միայն ե խոնարհման բայերն ունեն տարբեր վերջավորություններ, ի խոնարհման ներգործական և հասարակ սեռի բայերը կրավորաձև խոնարհման վերջավորություններով ըստ կիրառության կարող են արտահայտել նաև ներգործական սեռի իմաստ.

Նոքա *դատին* և դատին = Նրանք դատում են և դատվում:

Ա և ու խոնարհման բայերը ներկա ժամանակաձևում ստանում են ընդհանուր վերջավորություններ, և նույն բայաձևով ներգործական և հասարակ սեռի բայերը արտահայտում են ներգործական կամ կրավորական սեռի իմաստ.

Նա *մոռանայ* = Նա մոռանում է:

Նա *մոռացայ* = Նա մոռացվում է:

Թշնամի *թողու* զքաղաք = Թշնամին թողնում է քաղաքը:

Քաղաք *թողու* բնակչաց = Քաղաքը թողնվում է բնակիչներին:

6. Սահմանական եղանակի անցյալ անկատար ժամանակաձևում բոլոր չորս խոնարհումների ներգործական և հասարակ սեռի բայերը արտահայտության նույն ձևով անհրաժեշտության դեպքում կարող են արտահայտել թե՛ ներգործական, թե՛ կրավորական սեռի իմաստ.

Նոքա *առաքեին* զգիրս = Նրանք առաքում էին զրքերը:

Գիրք *առաքեին* = Գրքերը առաքվում էին:

Նոքա *մոռանային* = Նրանք մոռանում էին:

Նոքա *մոռացային* = Նրանք մոռացվում էին:

Նոքա *դատեին* = Նրանք դատում էին:

Նոքա *դատեին* = Նրանք դատվում էին:

Նոքա *թողուին* = Նրանք թողնում էին:

Գիտք *թողուին* = Գիտվեց թողնվում էին:

7. Ներգործական և հասարակ սեռի բայերի սահմանական և ստորադասական եղանակների բոլոր բաղադրյալ ժամանակաձևերն ըստ անհրաժեշտության կարող են արտահայտել ինչպես ներգործական, այնպես էլ կրավորական սեռի իմաստ(անցյալ դերբայն առանց ձևային փոփոխության կարող է արտահայտել ներգործական և կրավորական սեռի նշանակություն).

Սահմանական եղանակի վաղակատար-հարակատար ներկա (հարակատար) և անցյալ (զերակատար)

Նա *առաքնալ է (էր)* զթուղթ = Նա *առաքել է (էր)* թուղթը (*ե* խոնարհում):

Թուղթ *առաքնալ է (էր)* ի նմանէ = Թուղթը առաքվել (առաքված) է(էր) նրա կողմից:

Նա *ստացնալ է (էր)* զթուղթ = Նա ստացել է (էր) թուղթը (*ա* խոնարհում):

Թուղթ *ստացնալ է (էր)* = Թուղթը ստացվել կամ ստացված է (էր):

Նա *դատնալ է (էր)* = Նա դատել կամ դատվել, դատված է (էր) (*h* խոնարհում):

Նա *հեղնալ է (էր)* = Նա հեղել (թափել) է (էր) (*ու* խոնարհում):

Արիւն *հեղնալ է (էր)* = Արիւնը հեղվել (հեղված) է (էր):

Սահմանական եղանակի բաղադրյալ ապառնի և անցյալի ապառնի

Նա *առաքելոց է (էր)* = Նա առաքելու է (էր):

Գիրք *առաքելոց է (էր)* = Գիրքը առաքվելու է (էր):

Նա *ստանալոց է (էր)* = Նա ստանալու է (էր):

Գիրք *ստանալոց է (էր)* = Գիրքը ստացվելու է (էր):

Նա *դատելոց է (էր)* = Նա դատելու կամ դատվելու է (էր):

Նա *հեղլոց է (էր)* = Նա հեղելու է (էր):

Արիւն *հեղլոց է (էր)* = Արիւնը հեղվելու է (էր):

Ստորադասական եղանակի բաղադրյալ ապառնիներ

առաքնալ իցէ = առաքած կամ առաքված լինի, կլինի, պիտի լինի

առաքելոց իղէ = առաքելու կամ առաքվելու լինի, կլինի, պիտի լինի

8. Ստորադասական եղանակի առաջին ապառնի ժամանակաձևում ի խոնարհման ներգործական և հասարակ սեռի բայերը, խոնարհվելով կրավորաձև, իսկ ու խոնարհման բայերը ստանալով ընդհանուր վերջավորություններ, նույն բայաձևով կարող են արտահայտել ներգործական և կրավորական սեռի իմաստ.

դատիցի = դատի, կդատի, պիտի դատի և դատվի, կդատվի, պիտի դատվի

թողուցու = թողնի, կթողնի, պիտի թողնի և թողնվի, կթողնվի, պիտի թողնվի

9. Բոլոր խոնարհումների ներգործական, կրավորական և հասարակ սեռի բայերը ստորադասական եղանակի երկրորդ ապառնի ժամանակաձևի առաջին և երկրորդ դեմքերում նույն բայաձևով արտահայտում են ներգործական և կրավորական սեռի իմաստ.

սիրենցուք = սիրենք, կսիրենք, պիտի սիրենք, սիրելու ենք, ինչպես նաև՝ սիրվեմ, կսիրվեմ, պիտի սիրվեմ, սիրվելու եմ

սիրենցիք = սիրեք, կսիրեք, պիտի սիրեք, սիրելու եք, ինչպես նաև՝ սիրվեք, կսիրվեք, պիտի սիրվեք, սիրվելու եք

դատենցուք = դատենք, կդատենք, պիտի դատենք, դատելու ենք, ինչպես նաև՝ դատվենք, կդատվենք, պիտի դատվենք, դատվելու ենք

դատենցիք = դատեք, կդատեք, պիտի դատեք, դատելու եք, ինչպես նաև՝ դատվեք, կդատվեք, պիտի դատվեք, դատվելու եք

մոռացուք = մոռանանք, կմոռանանք, պիտի մոռանանք, մոռանալու ենք, ինչպես նաև՝ մոռացվենք, կմոռացվենք, պիտի մոռացվենք, մոռացվելու ենք

մոռացիք = մոռանաք, կմոռանաք, պիտի մոռանաք, մոռանալու եք, ինչպես նաև՝ մոռացվեք, կմոռացվեք, պիտի մոռացվեք, մոռացվելու եք

կիզցուք = այրենք, կայրենք, պիտի այրենք, այրելու ենք, ինչպես նաև՝ այրվենք, կայրվենք, պիտի այրվենք, այրվելու ենք

կիզցիք = այրեք, կայրեք, պիտի այրեք, այրելու եք, ինչպես նաև՝ այրվեք, կայրվեք, պիտի այրվեք, այրվելու եք

10. Սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակաձևում ներգործաձև խոնարհման եզակի թվի երրորդ դեմքը վերջավորություն չի ստանում, իսկ բուն հրամայականում անցյալ կատարյալի արմատական և *ել* և *ի* խոնարհումների բայերի ցույական հիմքը կրավորաձև խոնարհման դեպքում շեշտվում է: Ստացվում է անցյալ կատարյալի երրորդ դեմք և բուն հրամայական համաճարական շարքը.

տես = տեսավ

կէգ = այրեց

սիրեաց = սիրեց

դատեաց = դատեց

տես = տես

կէ'գ = այրի'ր

սիրեա'ց = սիրվի'ր

դատեա'ց = դատվի'ր

11. Հորդորական հրամայականի եզակի և հոգնակի թվերում (երկրորդ դեմք) բոլոր խոնարհումների ներգործական և հասարակ սեռի բայերի դեպքում նույն բայաձևը կարող է արտահայտել ներգործական և կրավորական սեռի իմաստ: Այս ժամանակաձևի իմաստն արտահայտվում է արդի հայերենի ըղձական, պայմանական, հարկադրական և հրամայական եղանակների բայաձևերով: Լեզվի պատմության ընթացքում հորդորական հրամայականը վերացել է (շարժեսցի՛ր – շարժեսցի՛ք, թողջի՛ր – թողջի՛ք և այլն):

Հորդորական հրամայականի հոգնակի թիվը համանունական շարք է կազմում նաև ստորադասական եղանակի երկրորդ ապառնի ժամանակաձևի հոգնակի թվի երկրորդ դեմքի հետ.

աղասցիք – ստորադասական եղանակի երկրորդ ապառնի, հոգնակի թիվ, երկրորդ դեմք

աղասցիք – հորդորական հրամայական, հոգնակի թիվ, երկրորդ դեմք

Մի շարք բայաձևեր համանունական շարք են կազմում որոշ հոլովաձևերի հետ:

1. Գոյականական հիմք ունեցող ի խոնարհման և ե խոնարհման բայերի (կրավորաձև խոնարհման դեպքում) սահմանական եղանակի ներկա ժամանակաձևի եզակի թվի երրորդ դեմքը և ի հոլովման նույն գոյականի եզակի թվի սեռական հոլովաձևը, ինչպես նաև գրաբարում ի-ով վերջացող գոյականների ուղղական հոլովաձևը.

պատասխանի – բայ, սահմանական եղանակ, եզակի թիվ,

երրորդ դեմք, կրավորաձև խոնարհում

պատասխանի - գոյական անուն, ուղղական հոլով, եզակի թիվ

թարգմանի - բայ, սահմանական եղանակ, եզակի թիվ, երրորդ դեմք

թարգմանի - գոյական, սեռական հոլով, եզակի թիվ

2. Անցյալ կատարյալում արմատական հիմք ունեցող բայերի ներգործածն խոնարհման եզակի թվի երրորդ դեմքը և գոյականի ուղղական հոլովաձևը.

դէզ - գոյական անուն, ուղղական հոլով, եզակի թիվ

դէզ (= *դիզեց*) – սահմանական եղանակ, անցյալ կատարյալ, եզակի թիվ, երրորդ դեմք

3. Անցյալ կատարյալում արմատական հիմք ունեցող բայերի ներգործածն խոնարհման եզակի թվի առաջին դեմքը և ի հոլովմամբ հոլովվող համապատասխան գոյականի սեռական հոլովաձևը.

դիզի (= *դեզի*) - գոյական անուն, սեռական հոլով, եզակի թիվ

դիզի (= *դիզեցի*) - բայ, սահմանական եղանակ, անցյալ կատարյալ, եզակի թիվ, առաջին դեմք

4. Սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակաձևի բաղադրյալ ցոյական հիմք ունեցող բայերի անցյալ կատարյալի եզակի թվի երրորդ դեմքը և *n - ա* խառն վերջադրական հոլովման հոգնակի թվի սեռական հոլովաձևը.

աւետնաց (= *ավետեց*) - բայ, սահմանական եղանակ, անցյալ կատարյալ, եզակի թիվ, երրորդ դեմք

աւետնաց (= *ավետիսների*) - գոյական անուն, սեռական հոլով, հոգնակի թիվ (Ձայն *աւետնաց* մատուցանէր ընկերացն)

5. Ի խոնարհման բայերի սահմանական եղանակի ներկա ժամանակաձևի երկրորդ դեմքը և *n-ա* խառն վերջադրական հոլովման հոգնակի թվի հայցական հոլովաձևը.

կարծիս (= *կարծում ես*) - բայ, սահմանական եղանակ, ներկա, եզակի թիվ, երկրորդ դեմք

կարծիս (= *կարծիք*) - գոյական անուն, հայցական հոլով, հոգնակի թիվ (Գրեաց *կարծիս* և ետ նմա)

Այսպիսով՝ գրաբարում ևս գործառնում են որոշակի ձևաբանական համանունական շարքեր, և անհրաժեշտություն կա ուսումնասիրելու հին հայերենի ձևաբանական, ինչպես նաև շարահյուսական համանունները:

Տեղեկություններ հեղինակի մասին

Օֆելյա Բաբայան - բ.գ.թ., պրոֆեսոր, հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն

E-mail: Babayan.Ofelya.47@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ. Լ.Հովհաննիսյանը: